Օձունի տաճարը իւր անջատ մոյթերի վերայ հաստատուած գմբեթով եւ յատակագծով միանգամայն նման է մեր Գայիանէին եւ Մրենին, բայց մի մեծ տարբերութեամբ, որ Գայիանէում բացի մոյթերից եւ երկարաձիգ ուղղութիւնից, գրեթէ, ոչինչ չէ մնացել բազիլիք եկեղեցիներից· իւր օրնամենտացիայով սասանեան արուեստն է յիշեցնում, ընդհանուր առմամբ նոյնը կարող ենք ասել Մրենի նկատմամբ.* ուրեմն, այստեղ եւս տեղական իրանական արուեստը յաղթող է հանդիսացել, ինչպէս Արուճի նկատմամբ տեսանք Պոգավանքի համեմատութեամբ: Դորա հակառակ Օձունում պահուած է բազիլիք եկեղեցու աղերսը չատ մեծ չափով, պատկերաքանդակները լուսամուտների չըրջանակների մէջ: Այս եկեղեցին մենք համարում ենք աւելի հին, քան մեծ տաճարը եւ «գանգակատուն» կոչուած յուշարձանը, որ դերեզմանական կոթող է փառաւոր, եւ ներկայ գիւղացիների կողմից այդպէս կոչուած, գանգերն այնտեղից կախած լինելու պատճառով· նոքա իրենց քարով, կառուցուածքով եւ պատկերագրութեամբ ժամանակով հեռու չեն միմեանցից: Պայտաձեւ կամարներ եւ ազեղներ մենք տեսնում ենք եւ ուրիշ տեղերում, ինչպէս Աշտարակի բազիլիկան է, Արագածի Աւանը կամ Թեղենեաց ձորում Բիրաշլուի մի նաւանի բազիլիկայի ափսիդն է եւ նոյնը Բայբուրդում, որ գտնւում է

Պատկ· 22

նիւթի ընտրութեան, սրահների պահպանութեան, պատկերագրութեան եւ օրնամենտացիայի մէջ, որ տարաբաղդաբար ջարդուած եւ փչացած ձեւով հասել է մեզ:

Օձունում երեք չէնքեր կան, որ փոխադարձաբար իրար լրացնում են նրանց հնութիւնը ճշդելու համար: Դոցանից առաջինը բերդի եկեղեցին է, թէեւ նորոգութեան ենթարկուած, բայց եւ այնպիսի արխայիկ ձեւերով, որ խորին հնութիւն են մատնանշում: Այդ նշաններն են նորա իսկական պայտաձեւ կամարները եւ քիչ չափով պահուած Գառնիից ոչ հեռու, Ազատ գետի ձախ վտակի վերայ, բայց ոչ մի տեղ այնպէս չէշտուած, ինչպէս Քասախն է, որի հարաւային նաւը անաղարտ է, ինչպէս եւ հիւսիսային պատին կից արեւելեան սենեակը: Այսպէս է նաեւ Լոռիի հիւսիսային սահմաններում Սադախլու գետի միջին հոսքում Բրգաձոր եւ Խոժոռնի գիւղերից դէպի հիւսիս արեւելք գտնուած Ծոփքը կամ Ածոփը մի նաւանի բազիլիկան (Պատկ· 15) եւ արեւմտեան կողմի նարթէքս — գաւիթը, բոլորն էլ պայտաձեւ կամարներով, որոնց նման է այս կողմից եւ Օձունի բերդի եկեղեցին: Ծոփքի ամենահին բազիլիկաներից մէկը լինելու ապացոյցն է

*Strz. Die Baukunst. պատկ· 182. 507.